կմերժենք աստուածասիրութիւն, եթէ կընդունենք մէկը՝ ուրեմն կընդունենք միւսը, ինչպէս Առաքեալն ասում. ‹‹ Եթէ ընկերիդ որ տեսնումես չես սիրում, Աստուած, որին չես տեսնում՝ ի՞նչպէս կարող ես սիրել ,, . ահա գործով կյայտնուի մարդոյս աստուածպաշտութիւն և ոչ լոկ խօսքով:

Պաղտասար Մինասեան Պօլսեցեանց

է Բ. Նոր Պայազէտ:

ՄԱՍԻՍ:

Մինչ ցե՞րբ Մասիս, Հայոց մեծաց նուիրական և սուրբ լեռ
Պիտի տեսնեմ սպիտակափառ քո գագաթը ամպամած,
Եւ ստորոտիդ շուրջը եղած հին քաղաքներն ու գիւղեր
Շատ դարերէ ի վեր այդպէս հողով փոշւով ծածկուած.
Եւ մինչև ցե՞րբ պիտի մնան քո որդիքը հարազատ
Խոր տխրութեան մէջ ընկղմած անգործունեայ, անտարբեր
Միթէ դեռ ես յոյս մի ունի՞ն որ քաջ Քերթողն Արտաւազդ՝
Անդունդներէդ ելնէ փշրել մեր ամրապինդ շղթաներ . . .
Միթէ կընա՞մք յուսալ կրկին Ամասիա մի տեսնել
Որ անունը քեզ պարգևեց ‹‹ Մասիս ազատ ,, կոչելով.
Նորա նման կելնե՞ն արդեօք աշխարհաշէնք, չքնա՜ղ լեռ,
Որ ձեռք զարնեն կառուցանել նոր քաղաքներ քո չորս քով:
Միթէ կընա՞մք յուսալ, որ նոր Վռամշապուհ մի ծնանի,
Որ խրախուսէ մեր հոգևոր ու աշխարհական գրիչները.
Թէ մեր ազգին ասկէց վերջը ճակատագիրն ա՞յն կլինի,
Որ յուսակտուր, անվարձ, անփոյթ անցընէ իւր օրերը:
Եւ համազգի եղբարց շատը օտար տեղեր թափառիկ,
Սորկութեան ծանր լուծը միթէ յաւէտ պիտի զգա՞ն.
Չկա՞յ արդեօք յոյս մի, Մասի՜ս, որ զքեզ և զմեր աշխարհիկ
Այն մարդկութեան խանձարուրը դարձեալ եղբարք մեր տեսնան:
Տեսնան զքեզ ազատապա՜նծ և վանքերը զարդարուած՝
Հայաստանի գիւղն ու քաղաք նոր նոր դպրոցք հաստատուած.
Եւ ես, Մասի՜ս, ունենա՞մ յոյս, որ մարմինըս 'ւ ոսկորներ՝
Հայաստանի մէջ կամփոփուին, ուր կարօտով եմ գիմեր:
Մասի՛ս, Մասի՜ս, տարաշխարհիկ պանդուխտ մի եմ զգայուն,
Որ տապանիդ սիրոյն գիմած կանցընեմ հոս կեանքս պանդուխտ.
Եւ կսպասեմ օր մի նաև բոլոր ազգը Հայկազուն՝
Տեսնեմ քովըդ՝ յետոյ մեռնիմ. ա՛յս է սրտիս միակ ուխտ:

Ս. Մարտ–Բեան: